

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(գանգատ թիվ 13610/12)

ՎՃԻՌ

5-րդ հոդվածի 1-ին կետ • Կալանավորման օրինականությունը • Դատարանում գործի քննության ընթացքում եւ անորոշ ժամկետով կալանավորման ժամկետը երկարացնելու հիմքերի բացակայությունը
5-րդ հոդվածի 3-րդ կետ • Նախնական կալանքի ողջամտությունը • Վերաբերելի եւ բավարար հիմքեր չներկայացնելը
5-րդ հոդվածի 4-րդ կետ • Դատական ստուգման ընթացակարգային երաշխիքները • Կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտումը
5-րդ հոդվածի 5-րդ կետ • Փոխհատուցումը • Ոչ նյութական վնասի համար հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունքի բացակայությունը Դատարանի կողմից վճռի կայացումից առաջ կամ դրանից հետո
6-րդ հոդվածի 2-րդ կետ • Անմեղության կանխավարկածը • Կալանքի ժամկետը երկարացնելու առնչությամբ կայացված որոշումների ձեւակերպումները, որոնք տվյալ հանգամանքներում չեն հանգեցնում մեղավորության վերաբերյալ ուղղակիորեն եւ անվերապահորեն արված հայտարարության եւ շտկվել են Վերաքննիչ դատարանի կողմից • «[նրան] քրեական պատասխանատվության ենթարկելու համար» դիմումատուի գործը դատաքննության նշանակելու որոշման մեջ ուղղակի եւ անվերապահ կերպով արված հայտարարությունը որպես սխալմունք չճանաչելը կամ այն հետազայում չշտկելը:

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

15 հունիսի 2021թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Վարդան Մարտիրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Յոնկո Գրոզեւ [Yonko Grozev]՝ *Նախագահ,*

Թիմ Այքը [Tim Eicke],

Ֆարիս Վեհաբովիչ [Faris Vehabović],

Յուլյա Անտոանելլա Մոտոկ [Iulia Antoanella Motoc],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *դատավորներ,*

և Անդրեա Տամիետտի [Andrea Tamietti]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

հաշվի առնելով՝

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Վարդան Մարտիրոսյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2012 թվականի մարտի 7-ին Դատարան ներկայացված գանգատը (թիվ 13610/12),

դատական քննության ընթացքում դիմումատուին կալանքի տակ պահելու օրինականության, դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերի ենթադրյալ բացակայության, բողոքարկման վարույթի ընթացքում կողմերի իրավահավասարության սկզբունքի ենթադրյալ խախտման եւ դիմումատուի փաստարկներին չանդրադառնալու, հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունքի ենթադրյալ բացակայության, ինչպես նաեւ անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարությանը (Կառավարություն) ծանուցելու եւ գանգատը մնացած մասով անընդունելի հայտարարելու մասին որոշումը,

կողմերի դիտարկումները,

2021 թվականի մայիսի 27-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Գործով արձարծվել են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն մի քանի հարցեր, այդ թվում՝ դատական քննության ընթացքում դիմումատուին կալանքի տակ պահելու ենթադրյալ անօրինականությունը (5-րդ հոդվածի 1-ին կետ), դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու համար ներպետական դատարանների կողմից վերաբերելի եւ բավարար պատճառներ ենթադրաբար չներկայացնելը (5-րդ հոդվածի 3-րդ կետ), Վերաքննիչ դատարանում կալանքի հարցը քննելիս կողմերի իրավահավասարության [սկզբունքի] ենթադրյալ չապահովումը (5-րդ հոդվածի 4-րդ կետ) եւ հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունքի ենթադրյալ բացակայությունը (5-րդ հոդվածի 5-րդ կետ): Դրանով նաեւ քննվում է այն հարցը, թե արդյոք մինչդատական վարույթի եւ դատական քննության ընթացքում դիմումատուի անմեղության կանխավարկածի իրավունքը խախտվել է դատարանների կողմից կայացված որոշումներով, թե՛ ոչ (6-րդ հոդվածի 2-րդ կետ):

ՓԱՍՏԵՐԸ

2. Դիմումատուն ծնվել է 1984 թվականին եւ քննարկվող ժամանակահատվածում պատիժը կրել է Երեւանի «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Դիմումատուին ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Տ. Սաֆարյանը:

3. Կառավարությունը ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը, իսկ այնուհետև՝ պրն Ե. Կիրակոսյանը:

4. Գործով փաստերը, ինչպես ներկայացրել են կողմերը, կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

I. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ԵՎ ՆՐԱՆ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀԵԼԸ

5. 2011 թվականի հուլիսի 1-ին դիմումատուն կալանքի տակ է վերցվել թմրամիջոցների մաքսանենգության փորձ կատարելուն օժանդակելու կասկածանքով:

6. 2011 թվականի հուլիսի 2-ին թմրամիջոցների մաքսանենգության փորձ կատարելու դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ:

7. 2011 թվականի հուլիսի 3-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել թմրամիջոցների մաքսանենգության փորձի համար, եւ նույն օրը Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է դիմումատուին երկու ամիս ժամկետով կալանավորելու վերաբերյալ քննիչի բերած միջնորդությունը: Դատարանը, *inter alia* (ի թիվս այլնի), հղում կատարելով Քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածին (ՔԴՕ. տե՛ս ստորեւ՝ 26-րդ պարբերությունը), իր որոշման մեջ նշել է, որ քանի որ կան ողջամիտ կասկածներ, որ դիմումատուն կատարել է իրեն մեղսագրվող արարքը, նա կարող է թաքնվել քննությունից կամ խոչընդոտել այն՝ անօրինական ազդեցություն գործադրելով դատավարությանը մասնակցող անձանց վրա եւ խոչընդոտելով ապացույցների ձեռքբերումը:

8. 2011 թվականի օգոստոսի 26-ին, հոկտեմբերի 28-ին եւ դեկտեմբերի 28-

ին նույն վարչական շրջանների դատարանը, քննիչի ներկայացրած միջնորդությունների հիման վրա, նախկինում բերված միեւնույն հիմքերով երկարացրել է դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը՝ յուրաքանչյուր անգամ երկու ամիս ժամկետով:

9. Ինչ վերաբերում է մասնավորապես 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի որոշումներին, Վարչական շրջանների դատարանը նախ ամփոփել է գործի՝ «նախաքննությամբ հաստատված» հանգամանքները՝ նշելով, որ դիմումատուն ձերբակալվել է թմրամիջոցների մաքսանենգության փորձ կատարելու կասկածանքով, եւ հետագայում վերջինիս մեղադրանք է առաջադրվել այդ հանցագործության համար, այնուհետեւ անցել է քննիչի միջնորդության եւ կողմերի ներկայացրած փաստարկների համառոտ ամփոփումներին եւ եկել հետեւյալ հիմնավորմանը.

«Դատարանը, ուսումնասիրելով [քննիչի] միջնորդությունը, ստուգելով դրա հիմնավորվածությունը հաստատող փաստաթղթերն ու կից նյութերը եւ լսելով քննիչին եւ [դիմումատուի] պաշտպանին, [ինչպես նաեւ] հաշվի առնելով մեղադրյալի կատարած արարքի բնույթը, վտանգավորության աստիճանը, գտնում է, որ միջնորդությունը ենթակա է բավարարման ...»:

10. 2011 թվականի նոյեմբերի 2-ին եւ դեկտեմբերի 29-ին դիմումատուն վերաքննիչ բողոքներ է ներկայացրել 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի որոշումների դեմ: Նա նշել է, *inter alia*, որ Վարչական շրջանների դատարանը բավարարել է իրեն կալանավորելու միջնորդությունը եւ հրաժարվել է գրավի դիմաց իրենց ազատ արձակել՝ առանց որեւէ փաստական հիմքերի կամ ապացուցի, որոնք հիմք կտային ենթադրելու, որ ինքը կթաքնվի կամ կխոչընդոտի քննությունը, եւ հաշվի չառնելով այն փաստը, որ ինքը նախկինում չի ունեցել դատվածություն կամ ներգրավված չի եղել թմրամիջոցների առուվաճառքի մեջ, ինչպես նաեւ ունեցել է մշտական բնակության վայր եւ աշխատանք: Նա լիովին համագործակցել է նախաքննական մարմնի հետ՝ տրամադրելով իրեն հայտնի բոլոր տեղեկությունները եւ երբեք փորձ չի արել թաքնվել քրեական հետապնդումից: Դիմումատուն նաեւ նշել է, որ դատարանի փաստարկներն իր

կողմից «կատարված» արարքի բնույթի եւ վտանգավորության աստիճանի վերաբերյալ արտացոլում են այն կարծիքը, որ ինքը մեղավոր է քննարկվող իրավախախտման համար՝ դրանով իսկ խախտելով անմեղության կանխավարկածի սկզբունքը:

11. 2011 թվականի նոյեմբերի 10-ի եւ 2012 թվականի հունվարի 19-ի որոշումներով Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքները՝ գտնելով, որ դիմումատուին կալանքի տակ պահելու հիմքերը դեռեւս չեն վերացել: Ինչ վերաբերում է անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման մասին պնդումներին, ապա այն իր որոշումներում արտահայտել է հետեւյալ կարծիքը.

12. Վերաքննիչ դատարանը 2011 թվականի նոյեմբերի 10-ի իր որոշման մեջ համաձայնել է դիմումատուի այն պնդման հետ, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարանը չունի անձի մեղավորության վերաբերյալ եզրույթներ օգտագործելու իրավասություն, սակայն գտել է, որ քննիչի միջնորդությունը բավարարելիս վիճարկվող հայտարարություն անելով՝ Վարչական շրջանների դատարանը ղեկավարվել է ՔԴՕ-ի՝ մինչդատական վարույթին առնչվող դրույթներով: Հետեւաբար դիմումատուի՝ այդ որոշման անօրինականության վերաբերյալ պնդումներն անհիմն են:

13. Վերաքննիչ դատարանը Վարչական շրջանների դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի որոշումը քննության առնելու վերաբերյալ 2012 թվականի հունվարի 19-ի իր որոշմամբ (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը), հղում կատարելով, *inter alia*, ՔԴՕ-ի 18-րդ հոդվածի 3-րդ կետին (տե՛ս ստորել՝ 34-րդ պարբերությունը), նշել է, որ դատարանները վարույթի այդ փուլում իրավասու են որոշել հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության, սակայն ոչ մեղավորության հարցը: Առաջինը պահանջում է ավելի քիչ ապացուցողական հիմք, քան երկրորդը, իսկ դատարանները չպետք է մեղադրյալին հանցանքի համար մեղավոր ճանաչելու հարցում առաջնորդվեն ենթադրությամբ: Այն եկել է այն եզրահանգման, որ անելով վիճարկվող

հայտարարությունը՝ Վարչական շրջանների դատարանը սահմանազանցել է վարույթի այդ փուլում իրեն վերապահված իրավասությունը: Հետևաբար տվյալ հայտարարությունը չէր կարող հիմք ծառայել քննիչի միջնորդությունը բավարարելու համար:

14. 2012 թվականի փետրվարի 28-ին Վարչական շրջանների դատարանը, քննիչի միջնորդության հիման վրա, նախկինում բերված հիմքերով եւս մեկ ամսով երկարացրել է դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը:

15. 2012 թվականի մարտի 4-ին դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք:

16. 2012 թվականի մարտի 14-ի գրությամբ Վերաքննիչ քրեական դատարանը դիմումատուի պաշտպանին ծանուցել է դիմումատուի վերաքննիչ բողոքի առնչությամբ 2012 թվականի մարտի 15-ին՝ ժամը 4-ին, նշանակված դատական նիստի մասին: Այդ գրությունն ուղարկվել է 2012 թվականի մարտի 15-ին եւ դիմումատուի փաստաբանի կողմից ստացվել 2012 թվականի մարտի 16-ին:

17. 2012 թվականի մարտի 15-ին Վերաքննիչ քրեական դատարանն անցկացրել է նշանակված նիստը եւ մերժել դիմումատուի բողոքը՝ նշելով, որ դեռեւս կան ողջամիտ կասկածներ, որ դիմումատուն կարող է թաքնվել: Ո՛չ դիմումատուն, ո՛չ էլ նրա պաշտպանը ներկա չեն գտնվել նիստին, որն անցկացվել է քննիչի ներկայությամբ, որը հանդես է եկել դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված նախնական կալանքի ժամկետը երկարացնելու առնչությամբ իր ներկայացրած միջնորդության պաշտպանությամբ: Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է, որ դիմումատուի փաստաբանը, տեղյակ լինելով նիստի անցկացման ժամի եւ վայրի մասին, չի ներկայացրել եւ հեռախոսով դատարանին տեղեկացրել է, որ ինքը զբաղված է մեկ այլ քրեական գործով եւ չի առարկում, որ նիստն անցկացվի իր բացակայությամբ, ինչի մասին վկայում է համապատասխան «հեռախոսային խոսակցության սղագրությունը»:

18. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի փաստաբանը պատշաճ կերպով ծանուցվել է նիստի մասին եւ ի հիմնավորումն իր պնդումների՝ ներկայացրել է «հեռախոսային խոսակցության սղագրություն» վերտառությամբ մի

շարք փաստաթղթեր: Ըստ 2012 թվականի մարտի 14-ի այդպիսի մի սղագրության՝ նախագահող դատավորն այդ օրը զանգահարել է դիմումատուի փաստաբանին եւ տեղեկացրել, որ նիստը նշանակված է 2012 թվականի մարտի 15-ին՝ ժամը 4-ին: Ըստ 2012 թվականի մարտի 15-ի մեկ այլ սղագրության՝ նախքան նիստը սկսելը փաստաբանը նախագահող դատավորին հեռախոսով ասել է, որ կարծել է, թե նիստը նշանակված է 2012 թվականի մարտի 16-ին: Այն բանից հետո, երբ դատավորը փաստաբանին հիշեցրել է, որ իրեն ծանուցվել է թե՛ գրավոր եւ թե՛ հեռախոսով տեղեկացվել է նիստի մասին, փաստաբանը տեղեկացրել է, որ ինքը դեմ չէ, որ նիստն անցկացվի իր բացակայությամբ, քանի որ ինքն այդ ժամանակ գտնվել է մեկ այլ նիստի:

19. Դիմումատուն վիճարկել է իր փաստաբանի չներկայանալու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի արած եզրահանգումներն ու սղագրությունների բովանդակությունը՝ պնդելով, որ իր փաստաբանի հետ նիստի վերաբերյալ առաջին անգամ կապ է հաստատվել 2012 թվականի մարտի 15-ին՝ ժամը 4:30-ի սահմաններում միայն, այսինքն՝ նիստը սկսվելուց կես ժամ հետո: Հեռախոսազանգը կատարվել է քննիչի եւ ոչ թե դատավորի կողմից, որը փաստաբանից հետաքրքրվել է՝ արդյոք նա ներկայանալու է նիստին, ինչին ի պատասխան փաստաբանն ասել է, որ իրեն այդ մասին չեն ծանուցել, եւ ինքը չի կարող ներկա գտնվել այլ գործերով զբաղված լինելու պատճառով: Այնուամենայնիվ, փաստաբանը երբեք իր համաձայնությունը չի տվել, որ նիստն անցկացվի իր բացակայությամբ:

II. ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀԵԼԸ

20. 2012 թվականի մարտի 12-ին դիմումատուի գործով քրեական գործի նախաքննությունն ավարտվել է, եւ գործն ուղարկվել է Երեւան քաղաքի Մալաթիա-Սեփաստիա վարչական շրջանի դատարան՝ ըստ էության քննության համար:

21. 2012 թվականի մարտի 15-ին Մալաթիա-Սեփաստիա վարչական շրջանի դատարանի դատավոր Ֆ.-ն կայացրել է դիմումատուի գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

22. 2012 թվականի մարտի 27-ին դատավոր Ֆ.-ն կայացրել է որոշում՝ քրեական գործը դատական քննության նշանակելու մասին: Այդ որոշման համապատասխան մասն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Ես՝ Երեւան քաղաքի Մալաթիա-Սեփաստիա վարչական շրջանի դատարանի [դատավոր Ֆ.-ն], ուսումնասիրելով [դիմումատուի եւ սույն գործով մյուս մեղադրյալների] դեմ հարուցված քրեական գործը ... պարզեցի, որ ... գործի նյութերում բացակայում են վարույթը կարճելու համար հիմք հանդիսացող հանգամանքները, [եւ որ] մինչդատական վարույթը կատարվել է առանց քրեադատավարական օրենքի էական խախտումների ...

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով [ՔԴՕ-ի] 292-րդ եւ 293-րդ հոդվածների պահանջներով՝ որոշեցի [քրեական գործով] դատական քննությունը նշանակել 2012 թվականի ապրիլի 6-ին՝ ժամը 12:30-ին, Երեւան քաղաքի Մալաթիա-Սեփաստիա վարչական շրջանի դատարանում՝ ... [դիմումատուին եւ սույն գործով մյուս մեղադրյալներին] [Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով] քրեական պատասխանատվության ենթարկելու համար ... [եւ] դատակոչի ցուցակը եւ մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցները թողնել անփոփոխ»:

23. 2013 թվականի փետրվարի 25-ին դիմումատուն դիմել է դատարան՝ իր նկատմամբ կիրառված կալանքը վերացնելու միջնորդությամբ:

24. Նույն օրը դատավոր Ֆ.-ն մերժել է միջնորդությունն այն հիմքով, որ առկա են հանցագործության կատարման մեջ դիմումատուի մասնակցության վերաբերյալ ողջամիտ կասկածները հաստատող բավարար փաստեր, եւ դիմումատուին կալանքի տակ պահելու հիմքերը դեռեւս չեն վերացել:

25. 2013 թվականի օգոստոսի 20-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարանը միանձնյա՝ դատավոր Ֆ.-ի նախագահությամբ, կայացրել է դատավճիռ՝ դիմումատուին մեղավոր ճանաչելով եւ նրան դատապարտելով չորս տարի վեց ամիս ժամկետով ազատազրկման:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ (ՔԴՕ. ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ)

Ա. Նախնական կալանքը

26. ՔԴՕ-ի 136-րդ հոդվածով նախատեսվում է, որ խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ եւ համապատասխան խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության մասին հիմնավորում: Կալանավորումը կիրառվում է միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝ դատարանում քրեական գործը քննելիս:

27. 138-րդ հոդվածով նախատեսվում է, որ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել երկու ամսից ավելի՝ բացառությամբ ՔԴՕ-ով նախատեսված դեպքերի: Քրեական գործով

մինչդատական վարությամբ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը, հաշվի առնելով գործի առանձնակի բարդությունը, դատարանի կողմից կարող է երկարացվել մինչև վեց ամիս, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ՝ մինչև տասներկու ամիս: Քրեական գործով մինչդատական վարությամբ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ տարին: Դատարանում գործի քննության ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետ չի սահմանվում:

28. 139-րդ հոդվածով նկարագրվում են քննիչի կամ դատախազի միջնորդությամբ մինչդատական վարությամբ մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու ընթացակարգը, եւ նախատեսվում է, *inter alia*, որ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին որոշում կայացնելիս դատարանը կարող է դա անել ՔԴՕ-ով նախատեսված սահմաններում՝ յուրաքանչյուր դեպքում երկու ամսից ոչ ավելի ժամանակով:

Բ. Կալանք նշանակելու եւ դրա ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումների դատական ստուգումը Վերաքննիչ դատարանի կողմից

29. 228-րդ հոդվածով նախատեսվում է, որ կալանավորելու մասին որոշման եւ կալանքի տակ պահելու ժամկետի ցանկացած երկարացման օրինականության եւ հիմնավորվածության դատական ստուգում իրականացվում է Վերաքննիչ դատարանի կողմից: Դատական ստուգումը կատարվում է դռնփակ դատական նիստում՝ դատախազի եւ պաշտպանի ներկայությամբ: Բողոքը քննելու օրվա մասին նախապես իրազեկ կողմի չներկայանալը չի խոչընդոտում դատական ստուգումն իրականացնելուն:

Գ. Դատական քննության նախապատրաստական փուլը

30. 292-րդ հոդվածով նախատեսվում է, որ քրեական գործն իր վարույթն ընդունած դատավորը հետազոտում է գործի նյութերը եւ գործը վարույթ ընդունելու պահից տասնհինգ օրվա ընթացքում կայացնում, *inter alia*, գործը դատական քննության նշանակելու մասին որոշում:

31. 293-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ գործը դատական քննության նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի, *inter alia*, խափանման միջոցը վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին որոշում:

32. 300-րդ հոդվածով նախատեսվում է, որ որոշում կայացնելու հետ միաժամանակ դատարանը պարտավոր է քննել մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, դրա տեսակի հիմնավոր լինելու կամ չլինելու հարցը՝ խափանման միջոցն ընտրված լինելու դեպքում:

Դ. Ազատությունից անօրինական զրկելու դիմաց փոխհատուցումը

33. 66-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսվում է, որ արդարացվածն իրավունք ունի պահանջելու անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու եւ դատապարտման արդյունքում կրած նյութական վնասի, այսինքն՝ ցանկացած հնարավոր բաց թողնված օգուտի ամբողջ ծավալով փոխհատուցում:

Ե. Անմեղության կանխավարկածը

34. 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՔԴՕ-ով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: 18-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է, որ անձի մեղավորության վերաբերյալ հետեւությունը չի կարող

հիմնված չլինել ենթադրությունների վրա, եւ այն պետք է հաստատվի փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (ՔՕ. ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ)

Ա. Քննարկվող ժամանակահատվածում գործող համապատասխան դրույթները

35. ՔՕ-ի 17-րդ հոդվածով նախատեսվում է, որ անձը, ում իրավունքները խախտվել են, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի (i) խախտված իրավունքը վերականգնելու համար, (ii) նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), ինչպես նաեւ չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր:

36. 1064-րդ հոդվածով նախատեսվում է, որ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետեւանքով պատճառված վնասն օրենքով սահմանված կարգով լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության եւ դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

Բ. 2014 թվականին ընդունված փոփոխությունները

37. 2014 թվականի նոյեմբերի 1-ից ՔՕ-ի 17-րդ հոդվածում քաղաքացիաիրավական վնասի տեսակների ցանկում ներառվել է ոչ նյութական վնասը, որը քաղաքացիական վարույթում ենթակա է հատուցման հատուկ նախատեսված դեպքերում: ՔՕ-ն լրացվել է նոր՝ 162.1 հոդվածով, որի 2-րդ կետով ներկայումս նախատեսվում է, որ անձը կարող է ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում պահանջել, եթե վարույթն իրականացնող մարմնի կամ դատարանի կողմից հաստատվել է, որ պետական մարմնի որոշումը, գործողությունը կամ անգործությունը հանգեցրել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված մի շարք իրավունքների, այդ թվում՝ ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքի խախտման:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

38. Դիմումատուն Կոնվենցիայի 5-րդ հոդվածով ներկայացրել է մի շարք բողոքներ. ա) 5-րդ հոդվածի 1-ին կետով նա պնդել է, որ 2012 թվականի մարտի 27-ի որոշումը (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը) եւ դրան հաջորդող կալանքը եղել են ապօրինի, բ) 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով նա պնդել է, որ ներպետական դատարաններն իր կալանավորման ժամկետը երկարացնելու մասով հիմքեր չեն ներկայացրել, եւ որ համապատասխան դատական որոշումները չեն եղել օրինական. գ) 5-րդ հոդվածի 4-րդ կետով նա պնդել է, որ 2012 թվականի մարտի 15-ի նիստի ժամանակ խախտվել են այդ հոդվածի ընթացակարգային երաշխիքները, եւ Վերաքննիչ դատարանը Վարչական շրջանի դատարանի որոշումները դատական ստուգման ենթարկելիս չի անդրադարձել իր

փաստարկներին. դ) 5-րդ հոդվածի 5-րդ կետով նա պնդել է, որ ինքը զրկված է եղել հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունքից:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը, այնքանով, որքանով վերաբերելի է [սույն գործին], ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել ազատությունից այլ կերպ, քան հետևյալ դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով.

...

գ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

...

3. «Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք ... ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ դատաքննության ընթացքում ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում եւ կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Ա. Ընդունելիությունը

39. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի սպառել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերով բերած իր բողոքների առնչությամբ իրավական

պաշտպանության ներպետական միջոցները, քանի որ վերջինս Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2012 թվականի մարտի 15-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք չի ներկայացրել Վճռաբեկ դատարան (տե՛ս վերելում՝ 17-րդ պարբերությունը):

40. Դիմումատուն նշել է, որ իր բողոքների առնչությամբ վճռաբեկ բողոքն իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի հանդիսացել, եւ դրանով հատուցում ստանալու հնարավորություն չէր կարող տրամադրվել:

41. Դատարանը հղում է կատարում իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման ընդհանուր սկզբունքներին, որոնք նշված են, *inter alia*, Վուչկովիչն ու այլք ընդդեմ Սերբիայի ((նախնական առարկություն) [ՄՊ] [*Vučković and Others v. Serbia* (preliminary objection) [GC]], թիվ 17153/11 եւ մյուս 29-ը, § 69-77, 2014 թվականի մարտի 25) եւ *Գերգինան ընդդեմ Ռումինիայի* ((որոշում) [ՄՊ] [*Gherghina v. Romania* ((dec.) (GC)], թիվ 42219/07, §§ 83-89, 2015 թվականի հուլիսի 9) գործերում: Դատարանը նշում է, որ Հայաստանի դեմ մի շարք գործերով արդեն իսկ քննել եւ մերժել է ներպետական իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասին Կառավարության ներկայացրած նմանօրինակ առարկություններ՝ գտնելով, որ կալանավորման գործերով վճռաբեկ բողոքն իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չի հանդիսացել (տե՛ս *Արզումանյանն ընդդեմ Հայաստանի* [*Arzumanyan v. Armenia*], թիվ 25935/08, §§ 28-32, 2018 թվականի հունվարի 11, *Ջհանգիրյանն ընդդեմ Հայաստանի* [*Jhangiryan v. Armenia*], թիվ 44841/08 եւ 63701/09, § 76, 2020 թվականի հոկտեմբերի 8, եւ *Սմբատ Այվազյանն ընդդեմ Հայաստանի* [*Smbat Ayvazyan v. Armenia*], թիվ 49021/08, § 78, 2020 թվականի հոկտեմբերի 8): Հաշվի առնելով, որ Կառավարությունը նոր տարրեր չի ներկայացրել, Դատարանը որեւէ պատճառ չի տեսնում սույն գործի պարագայում շեղվելու իր նախորդ եզրահանգումներից եւ հետեւաբար մերժում է Կառավարության առարկությունը:

42. Դատարանը նշում է, որ այս բողոքները ո՛չ ակնհայտորեն անհիմն են եւ ո՛չ էլ անընդունելի են Կոնվենցիայի 35-րդ հոդվածում նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. *Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետ (դատական քննության ընթացքում դիմումատուի նկատմամբ ենթադրյալ անօրինական կալանք կիրառելը (2012 թվականի մարտի 27-ից մինչև 2013 թվականի օգոստոսի 30-ը))*

ա) Կողմերի փաստարկները

43. Դիմումատուն նշել է, որ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարանի՝ գործը դատաքննության նշանակելու վերաբերյալ 2012 թվականի մարտի 27-ի որոշումը (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը) չէր կարող համարվել «օրենքով սահմանված», քանի որ այն սահմանափակվում էր հետևյալ բառերով՝ «խափանման միջոցը թողնել անփոփոխ»։ ՔԴՕ-ի 292-րդ եւ 293-րդ հոդվածներին հղում կատարելիս Վարչական շրջանի դատարանը խախտել է ՔԴՕ-ի 300-րդ հոդվածի պահանջը՝ չներկայացնելով հիմքեր մինչդատական փուլում նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու մասին իր որոշման համար (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը), եւ ուղղակի հաստատել է այդ փուլում կայացված որոշումները՝ դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու համար չներկայացնելով որեւէ պատճառ կամ դրա համար չսահմանելով որեւէ ժամկետ։ Այդպիսի գործելակերպը հակասում է Դատարանի նախադեպային իրավունքին (դիմումատուն հղում է կատարել մասնավորապես *Նախմանովիչն ընդդեմ Ռուսաստանի* [*Nakhmanovich v. Russia*] թիվ 55669/00, §§ 70 եւ 71, 2006 թվականի մարտի 2, եւ *Ելոյեւն ընդդեմ Ուկրաինայի* [*Yeloyev v. Ukraine*] թիվ 17283/02, § 54, 2008 թվականի նոյեմբերի 6, գործերին), քանի որ այն խախտել է կամայականությունից պաշտպանվելու սկզբունքը եւ 2012 թվականի մարտի 27-ից հետո դիմումատուին իր կալանքի վերաբերյալ հիմքերի եւ ժամկետների առնչությամբ թողել է անորոշ վիճակում։ Կառավարության պնդումն առ այն, որ դատավորը, ուսումնասիրելով գործի նյութերը, հանգել է հետեւության՝ հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության եւ նրա կալանքի ժամկետը երկարացնելու հիմքերի վերաբերյալ (տե՛ս ստորել՝ 44-րդ

պարբերությունը), եղել է սխալ, քանի որ 2012 թվականի մարտի 27-ի որոշումը չի պարունակել նման եզրահանգումներ: Այսպես՝ այդ որոշմանը հաջորդող 15 ամիսների ընթացքում, երբ դիմումատուն գտնվել է կալանքի տակ, եւ մինչեւ 2013 թվականի օգոստոսի 20-ին նրա նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելը (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը) դատարանը երբեք չի վերանայել կալանքի անհրաժեշտության հարցը, եւ միակ բացառությունը եղել է 2013 թվականի փետրվարի 25-ի որոշումը, որով դատարանը մերժել է նրա՝ կալանքից ազատման միջնորդությունը (տե՛ս վերելում՝ 24-րդ պարբերությունը): Կառավարության փաստարկն առ այն, որ 2012 թվականի մարտի 27-ի որոշումը պետք է դիտարկվեր 2013 թվականի փետրվարի 25-ի որոշման լույսի ներքո, ինքնին հակասում էր ազատության եւ անձեռնմխելիության իրավունքի հասկացությանը, հատկապես եթե հաշվի առնենք այդ երկու որոշումների կայացման ժամանակահատվածները եւ այն փաստը, որ երկրորդն այդքան երկար ժամանակահատվածում ընդունված միակ այլ որոշումն էր:

44. Կառավարությունը նշել է, որ 2012 թվականի մարտի 27-ի որոշումն օրինական է եղել եւ համապատասխանել է ներպետական իրավունքին, մասնավորապես՝ ՔԴՕ-ի 292-րդ եւ 293-րդ հոդվածներին (տե՛ս վերելում՝ 30-րդ եւ 31-րդ պարբերությունները): Դիմումատուի գործը վարույթ ընդունելուց հետո դատավորին հատկացված 15 օրվա ընթացքում վերջինս ուսումնասիրել է մինչդատական վարույթի, այդ թվում՝ ընտրված խափանման միջոցի ընդհանուր օրինականության հարցը: Ուսումնասիրելով գործի նյութերը՝ դատավորը եկել է այն եզրահանգման, որ կալանավորում կիրառելու հիմնավոր կասկածները եւ հիմքերը դեռեւս չեն վերացել: Այն փաստը, որ դատավորը գործը դատական քննության նշանակելու մասին որոշում է կայացրել եւ ոչ թե այն վերադարձրել է լրացուցիչ քննության, ենթադրում է, որ նա մինչդատական վարույթի փուլում նյութական կամ դատավարական իրավունքի որեւէ կոպիտ խախտում չի հայտնաբերել, ինչի մասին նշվել է համապատասխան որոշման մեջ (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը): Բացի այդ, դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքն անփոփոխ թողնելու մասին 2012 թվականի մարտի 27-ի

որոշումը պետք է դիտարկվեր նույն դատարանի՝ կալանքից ազատելու վերաբերյալ դիմումատուի միջնորդությունը մերժելու վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 25-ի որոշմամբ տրված գնահատման լույսի ներքո, որում նշվել են դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու համար հիմք հանդիսացող հիմքերն ու պայմանները (տե՛ս վերելում՝ 24-րդ պարբերությունը):

բ) Դատարանի գնահատականը

45. Դատարանը կրկին նշում է, որ որպեսզի պահպանվի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը՝ քննարկվող կալանավորումը պետք է տեղի ունենա «օրենքով սահմանված կարգով» եւ լինի «օրինական»: Կոնվենցիայով հղում է կատարվում հատկապես ներպետական օրենսդրությանը, եւ սահմանվում է ներպետական օրենսդրության նյութական եւ ընթացակարգային դրույթները հարգելու պարտավորությունը, սակայն դրանով պահանջվում է նաեւ, որ ազատությունից զրկման ցանկացած դեպք պետք է լինի 5-րդ հոդվածի նպատակին, մասնավորապես՝ անհատին կամայականությունից պաշտպանելու պահանջին համապատասխան (տե՛ս *Հաթչիսոն Ռեյդն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Hutchison Reid v. the United Kingdom*], թիվ 50272/99, § 47, ՄԻԵԴ 2003-IV, *Ասսանիձեն ընդդեմ Վրաստանի* [ՄՊ] [*Assanidze v. Georgia* [GC]], թիվ 71503/01, § 171, ՄԻԵԴ 2004-II եւ *Վասենինն ընդդեմ Ռուսաստանի* [*Vasenin v. Russia*], թիվ 48023/06, § 108, 2016 թվականի հունիսի 21):

46. Սույն գործով Դատարանը նշում է, որ ՔԴՕ-ի 293-րդ հոդվածի համաձայն գործը դատական քննության նշանակելու մասին որոշումը պետք է պարունակի նաեւ խափանման միջոցի վերաբերյալ որոշում (տե՛ս վերելում՝ 31-րդ պարբերությունը): Դիմումատուի վերաբերյալ դատական գործը դատաքննության նշանակելու մասին 2012 թվականի մարտի 27-ի որոշումն այդ առնչությամբ պարունակում է հետեւյալ եզրահանգումը՝ «թողնել անփոփոխ ... մեղադրյալի նկատմամբ ընտրված խափանման միջոցը» (տե՛ս վերելում՝ 22-րդ

պարբերությունը): Այսպիսով, դիմումատուի նկատմամբ կիրառված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին Վարչական շրջանի դատարանի ամբողջ որոշումը սահմանափակվում էր միայն այդ նախադասությամբ: Դիմումատուն պնդել է, որ դրանով խախտվել է ՔԴՕ-ի 300-րդ հոդվածի պահանջները (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը), ինչպես նաև Դատարանի նախադեպային իրավունքը (տե՛ս վերելում՝ 43-րդ պարբերությունը):

47. Ինչ վերաբերում է առաջինին, Դատարանը նշում է, որ ՔԴՕ-ի 300-րդ հոդվածով պահանջվում է, որ գործը քննող դատարանը «որոշումներ կայացնելու հետ միաժամանակ» որոշում կայացնի նաև խափանման միջոցի վերաբերյալ՝ այդպիսի միջոց ընտրված լինելու դեպքում (տե՛ս վերելում՝ 32-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք «որոշումներ»-ին արված անորոշ հղումը վերաբերում է նաև դատավարության նախապատրաստական փուլում ՔԴՕ-ի 292-րդ հոդվածին համապատասխան գործը դատաքննության նշանակելու մասին կայացված որոշմանը (տե՛ս վերելում՝ 30-րդ պարբերությունը), այս դեպքում՝ 2012 թվականի մարտի 27-ի որոշմանը (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը), թե՛ ոչ: Հատկանշական է, որ այդ որոշմամբ ոչ մի հղում չի կատարվել ՔԴՕ-ի 300-րդ հոդվածին: Ամեն դեպքում, եթե նույնիսկ ենթադրենք, որ ՔԴՕ-ի 300-րդ հոդվածը կիրառելի էր քննարկվող որոշման նկատմամբ, չի կարելի ասել, որ այդ հոդվածով ուղղակիորեն պահանջվում է, որ գործը քննող դատարանը մեղադրյալին կալանքի տակ պահելու անհրաժեշտության վերաբերյալ կայացրած իր որոշման համար ներկայացնի հիմնավորումներ: Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք այդ պահանջը նշված հոդվածում անուղղակիորեն ներկայացված է, թե՛ ոչ, եւ եթե այո, ապա արդյոք այդ առումով այն պահպանվել է, թե՛ ոչ, Դատարանն անհրաժեշտ չի համարում որոշել այդ հարցերը՝ հաշվի առնելով ստորեւ բերված եզրահանգումները:

48. Դատարանը կրկին նշում է, որ դատական մարմինների կողմից կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշումներում հիմքեր չներկայացնելը կարող է անհամատեղելի լինել 5-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ կամայականություններից պաշտպանվելու սկզբունքի հետ

(տե՛ս *Ստաշայտիսն ընդդեմ Լիտվայի* [*Stasaitis v. Lithuania*], թիվ 47679/99, § 67, 2002 թվականի մարտի 21, *Նախմանովիչն ընդդեմ Ռուսաստանի* [*Nakhmanovich v. Russia*], թիվ 55669/00, § 70, 2006 թվականի մարտի 2, եւ *Ելոեւն ընդդեմ Ուկրաինայի* [*Yeloyev v. Ukraine*], թիվ 17283/02, § 54, 2008 թվականի նոյեմբերի 6): Դատարանը նշում է, որ սույն գործում նշված հանգամանքներին համանման հանգամանքներում արդեն այդ հիմքով հայտնաբերել է 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված՝ *Նախմանովիչի* գործը, §§ 70-72, վերելում հիշատակված՝ *Ելոեւի* գործը, §§ 54-55, *Սոլովեյը եւ Ջոզուլյան ընդդեմ Ուկրաինայի* [*Solovey and Zozulya v. Ukraine*], թիվ 40774/02 եւ 4048/03, § 76, 2008 թվականի նոյեմբերի 27, եւ *Խարչենկոն ընդդեմ Ուկրաինայի* [*Kharchenko v. Ukraine*], թիվ 40107/02, §§ 75-76, 2011 թվականի փետրվարի 10): Ինչպես այդ գործերում, Վարչական շրջանի դատարանը դիմումատուի գործը դատաքննության նշանակելու մասին 2012 թվականի մարտի 27-ին կայացրած իր որոշման մեջ եւս պարզապես անփոփոխ է թողել մինչդատական վարույթի փուլում նրա նկատմամբ նշանակված կալանքը՝ առանց իր այդ որոշման համար ներկայացնելու որեւէ հիմնավորում կամ առանց սահմանելու ժամկետ դիմումատուի կալանքի համար (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը): Այդ օրվանից հետո դիմումատուն իր կալանքի հիմքերի եւ տեւողության առնչությամբ հայտնվել է անորոշ վիճակում: Ինչ վերաբերում է դիմումատուի՝ նշանակված կալանքը վերացնելու մասին միջնորդության վերաբերյալ 2013 թվականի փետրվարի 25-ի որոշմանը, Դատարանը նշում է, որ ի հակառակ Կառավարության պնդմանը (տե՛ս վերելում՝ 44-րդ պարբերությունը)՝ այդ որոշումը չի պարունակել դիմումատուի կալանքը հիմնավորող որեւէ կոնկրետ հիմք եւ ավելին, կայացվել է 2012 թվականի մարտի 27-ի որոշումից գրեթե մեկ տարի անց (տե՛ս վերելում՝ 24-րդ պարբերությունը): Հետեւաբար այն չի կարող համարվել որպես այդ որոշման թերությունների շտկում:

49. Դատարանը նշում է, որ դա կարծես թե քննարկվող ժամանակաշրջանում եղել է ընդհանուր գործելակերպ, քանի որ ներպետական իրավունքի համապատասխան դրույթներով միայն մինչդատական վարույթի փուլում էր դատարաններից ուղղակիորեն պահանջվում կալանքի ժամկետը երկարացնելու համար ներկայացնել հիմնավորումներ եւ սահմանել ժամկետներ (տե՛ս վերելում՝ 7-րդ, 8-րդ, 14-րդ եւ 26-28-րդ պարբերությունները), եւ պարզ չէ, թե

արդյոք նման պահանջները տարածվում էին դատաքննության նախապատրաստական փուլում կայացված որոշումների նկատմամբ, թե՛ ոչ, ինչպես սույն գործով (տե՛ս վերելում՝ 22-րդ, 30-րդ եւ 31-րդ պարբերությունները եւ համեմատության համար տե՛ս *Մոլոդորիչն ընդդեմ Ուկրաինայի* [*Molodorych v. Ukraine*], թիվ 2161/02, § 105, 2010 թվականի հոկտեմբերի 28): Այս հանգամանքներում Դատարանը համարում է, որ Վարչական շրջանի դատարանի 2012 թվականի մարտի 27-ի որոշմամբ դիմումատուին չի ընձեռվել պատշաճ պաշտպանություն կամայականությունից, որը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով կալանքի «օրինականության» կարելու տարր է համարվում, եւ հետեւաբար դիմումատուի նկատմամբ 2012 թվականի մարտի 27-ից մինչեւ 2013 թվականի օգոստոսի 20-ը նշանակված կալանքը չի համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:

50. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

2. *Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերը (դիմումատուի մինչդատական կալանքի համար վերաբերելի եւ բավարար պատճառների ենթադրյալ բացակայությունը եւ 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի, ինչպես նաեւ 2012 թվականի փետրվարի 28-ի որոշումների ենթադրյալ անօրինական լինելը)*

51. Դիմումատուն նշել է, որ ներպետական դատարաններն իր կալանքի ժամկետը երկարացնելու համար չեն ներկայացրել վերաբերելի եւ բավարար պատճառներ՝ դրանով խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Մինչդատական վարույթի ընթացքում նրանց կողմից ընդունված համապատասխան որոշումները, մասնավորապես՝ 2011 թվականի հոկտեմբերի 28-ի, 2011 թվականի դեկտեմբերի 28-ի եւ 2012 թվականի փետրվարի 28-ի որոշումները (տե՛ս վերելում՝ 8-րդ եւ 14-րդ պարբերությունները) չեն համապատասխանել ներպետական իրավունքին, որով դատարաններից պահանջվում էր պատճառաբանել նախնական կալանք նշանակելու վերաբերյալ իրենց կայացրած որոշումները (տե՛ս վերելում՝ 26-րդ պարբերությունը), եւ հետեւաբար դրանք եղել են անօրինական՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտմամբ:

52. Կառավարությունը նշել է, որ ներպետական դատարանները դիմումատուի կալանքի ժամկետի երկարացման համար ներկայացրել են վերաբերելի եւ բավարար պատճառներ, ինչպես նշված է նրանց համապատասխան որոշումներում, որոնք եւ ընդունվել են համապատասխան ներպետական դրույթներին համապատասխան:

53. Դատարանն անհրաժեշտ է համարում նախ եւ առաջ անդրադառնալ դիմումատուի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն ներկայացված բողոքին եւ հղում կատարել նշված հոդվածով սահմանված՝ դատաքննության ընթացքում ազատ արձակվելու իրավունքին առնչվող իր ընդհանուր սկզբունքներին (տե՛ս *Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության* [ՄՊ] [*Buzadji v. the Republic of Moldova* [GC]], թիվ 23755/07, §§ 92-102, ՄԻԵԴ 2016

(քաղվածքներ) եւ *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի* [*Ara Harutyunyan v. Armenia*], թիվ 629/11, §§ 48-53, 2016 թվականի հոկտեմբերի 20): Դատարանը նշում է, որ պարզել է, որ կալանք նշանակելիս եւ դրա ժամկետը երկարացնելիս քարացած ձեւակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում (տե՛ս, որպես ամենավերջին վճիռներ, վերելում հիշատակված *Ջհանգիրյանի* գործը, § 91, եւ վերելում հիշատակված *Սմբատ Այվազյանի* գործը, § 88): Սույն գործով ներպետական դատարանները դիմումատուի նկատմամբ կալանք նշանակելիս եւ դրա ժամկետը երկարացնելիս, թաքնվելու կամ քննությունը խոչընդոտելու ռիսկին հղում կատարելով, նույն կերպ սահմանափակվել են իրենց որոշման մեջ վերացական եւ կարծրատիպային ձեւով կրկնելով այս հիմքերը՝ առանց անդրադառնալու դիմումատուի գործի հատուկ փաստերին կամ բերելու կոնկրետ հիմքեր, թե ինչու են համարել, որ այդ ռիսկերը հիմնավոր են (տե՛ս վերելում՝ 7-րդ, 8-րդ, 11-րդ, 14-րդ, 17-րդ, 22-րդ եւ 24-րդ պարբերությունները):

54. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

55. Հաշվի առնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն իր արած եզրահանգումները (տե՛ս վերելում՝ 53-րդ եւ 54-րդ պարբերությունները)՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում առանձին անդրադառնալ այն հարցին, թե արդյոք 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի, ինչպես նաեւ 2012 թվականի փետրվարի 28-ի որոշումների ենթադրյալ անօրինականության առնչությամբ եւս Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում տեղի ունեցել է, թե՛ ոչ:

3. *Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը*

ա) **Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 15-ի նիստի ընթացքում 5-րդ հոդվածի 4-րդ կետի ընթացակարգային երաշխիքների պահպանումը**

i) *Կողմերի փաստարկները*

56. Դիմումատուն նշել է, որ ո՛չ ինքը եւ ո՛չ էլ իր փաստաբանը չեն ծանուցվել 2012 թվականի մարտի 15-ի Վերաքննիչ քրեական դատարանի նիստի մասին (տե՛ս վերելում՝ 17-րդ եւ 19-րդ պարբերությունները): Համապատասխան որոշման մեջ պարունակվող հայտարարությունն առ այն, որ իր փաստաբանը պատշաճ կերպով ծանուցվել է, չի համապատասխանում իրականությանը: Իր փաստաբանը դատավորից հեռախոսազանգեր չի ստացել կամ պատասխանել, որ այլ դատական նիստի պատճառով չի կարող ներկա գտնվել նիստին: Դիմումատուն վիճարկել է Կառավարության ներկայացրած «հեռախոսային խոսակցությունների սղագրությունների» ձեւը եւ բովանդակությունը եւ պնդել, որ իր փաստաբանի գործունեության ողջ ընթացքում որեւէ դատավոր հեռախոսով կապ չի հաստատել նրա հետ: Ծանուցման պատշաճ ձեւը եղել է ողջամիտ ժամկետներում ծանուցագիր ուղարկելը, ինչը չի կատարվել նրա գործով (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը): Դիմումատուն նշել է, որ դրա արդյունքում ո՛չ ինքը, ո՛չ էլ իր փաստաբանը ներկա չեն գտնվել նիստին, մինչդեռ քննիչը ներկայացել է դատարան եւ ներկայացրել փաստարկներ, որոնց պաշտպանական կողմը չի կարողացել պատասխանել կամ առարկություններ ներկայացնել: Հետեւաբար նա հակառակ կողմի համեմատ հայտնվել է զգալի անբարենպաստ պայմաններում, եւ Վերաքննիչ դատարանի 2012 թվականի մարտի 15-ի դատական նիստը տեղի է ունեցել 5-րդ հոդվածի 4-րդ կետի ընթացակարգային երաշխիքների խախտմամբ:

57. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի ներկայացրած փաստարկները եւ հղում կատարելով իրենց կողմից ներկայացված հեռախոսային խոսակցությունների սղագրություններին (տե՛ս վերելում՝ 18-րդ պարբերությունը)՝

պնդել է, որ դիմումատուի փաստաբանը պատշաճ կերպով ծանուցվել է քննարկվող դատական նիստի մասին: Բացի այդ, փաստաբանի բացակայությունը համապատասխանել է ներպետական իրավունքին, մասնավորապես՝ ՔԴՕ-ի 288-րդ հոդվածին (տե՛ս վերելում՝ 29-րդ պարբերությունը), եւ դա փաստացիորեն չի ազդել նիստի մրցակցային բնույթի վրա, քանի որ Վերաքննիչ դատարանին լրացուցիչ ապացույցներ չեն տրամադրվել, եւ դատական ստուգումն իրականացվել է դիմումատուի վերաքննիչ բողոքի սահմաններում: Դա չի հանգեցրել նաեւ կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտման՝ հաշվի առնելով, որ փաստաբանը պարզորոշ կերպով տվել է իր համաձայնությունը, որ նիստն անցկացվի իր բացակայությամբ:

ii) Դատարանի գնահատականը

58. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետով պահանջվում է, որ կալանավորման դեմ ներկայացված բողոքը քննող դատարանն ապահովի դատական քննության ընթացակարգային երաշխիքներ: Դատավարությունը պետք է լինի մրցակցային եւ միշտ պետք է ապահովի կողմերի, դատախազի եւ կալանավորված անձի միջեւ «իրավահավասարություն» (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի* [ՄՊ][*Nikolova v. Bulgaria*] [GC], թիվ 31195/96, § 58, ՄԻԵԴ 1999-II եւ *Շանդրուն ընդդեմ Ռումինիայի* [*Sandru v. Romania*], թիվ 33882/05, § 46, 2013 թվականի հոկտեմբերի 15):

59. Սույն գործով Կառավարությունը չի վիճարկել դիմումատուի այն պնդումը, որ նա անձամբ չի ծանուցվել 2012 թվականի մարտի 15-ի նիստի վերաբերյալ: Կողմերի միջեւ չի վիճարկվել նաեւ այն փաստը, որ դիմումատուի փաստաբանին փոստով ուղարկված ծանուցումը փաստաբանին փոխանցվել է ուշացումով, մասնավորապես՝ նշանակված դատական նիստի հաջորդ օրը (տե՛ս վերելում՝ 16-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, կողմերը միակարծիք չեն եղել այն հարցում, թե արդյոք դատավորի կողմից հեռախոսազանգեր կատարվել են փաստաբանին՝ ծանուցելով դատական նիստի մասին, թե՛ ոչ:

60. Դատարանը նշում է, որ ընդդեմ Հայաստանի մեկ այլ գործով արդեն

քննել է նմանատիպ իրավիճակ եւ հայտնաբերել է 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում (տե՛ս *Ղավալյանն ընդդեմ Հայաստանի* [*Ghavalayan v. Armenia*], թիվ 50423/08, §§ 92-96, 2020 թվականի հոկտեմբերի 22): Այդ գործով այն վճռել է, որ քրեական դատավարության ներպետական օրենսդրությունը չի պարունակում կոդաքին կալանքի գործերով դատական նիստերի մասին հեռախոսով կամ այլ միջոցներով ծանուցելու որեւէ դրույթ, եւ որ այդ դրույթների բացակայությունը էապես մեծացնում է կամայականության հավանականությունը: Հաշվի առնելով դա՝ Դատարանը բավարարված չի եղել Կառավարության հավաստիացումներով այն ձեւի առնչությամբ, որով համապատասխան մարմինները փորձել են կատարել դիմումատուի փաստաբանների ներկայությունը համապատասխան նիստին ապահովելու իրենց պարտականությունը:

61. Դատարանը նկատում է, որ սույն գործի իրադարձությունները տեղի են ունեցել *Ղավալյանի* գործից շուրջ չորս տարի անց, եւ ոչինչ չի հուշում այն մասին, որ մինչեւ այդ [իրադարձությունների տեղի ունենալու] պահը ՔԴՕ-ում ներդրվել են օրենսդրական փոփոխություններ: Ուստի դիմումատուի փաստաբանին հեռախոսով ծանուցելու ենթադրյալ փորձերն իրենց հիմքում չունեն որեւէ օրենսդրական դրույթ: Ավելին, այդ ընթացակարգը կարգավորող դրույթների բացակայության պայմաններում որեւէ օբյեկտիվ միջոց չկա ստուգելու համար, թե ենթադրյալ հեռախոսազանգերն իրականում կատարվե՞լ են, եւ եթե այո, ապա տվյալ սղագրությունները ճշգրտորեն արտացոլո՞ւմ են դրանց բովանդակությունը (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), վերելում հիշատակված *Ղավալյանի* գործը, § 93):

62. Հետեւաբար Դատարանը որեւէ պատճառ չի տեսնում այս գործով այլ եզրահանգման գալու համար եւ գտնում է, որ հստակ սահմանված կանոնների բացակայության պայմաններում այն եղանակով, որով [դատական] մարմինները ենթադրաբար փորձել են կատարել դիմումատուի փաստաբանի ներկայությունը 2012 թվականի մարտի 15-ին կայացած դատական նիստին ապահովելու իրենց պարտականությունը, չի ապահովվել կամայականության դեմ բավարար երաշխիքներ: Արդյունքում դիմումատուի փաստաբանը բացակայել է այդ նիստից,

մինչդեռ քննիչը ներկա է գտնվել այդ նիստին եւ ներկայացրել է փաստարկներ: Այսպիսով, այդ նիստերի անցկացման եղանակը խախտել է վարույթի մրցակցային բնույթը եւ կողմերի միջեւ իրավահավասարության ապահովման սկզբունքը (համեմատության համար տե՛ս վերելում հիշատակված *Ղալալյանի* գործը, § 93):

63. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

բ) Դիմումատուի նախնական կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ Վարչական շրջանի դատարանի որոշումների դեմ դիմումատուի բողոքներում բերված փաստարկներին Վերաքննիչ դատարանի կողմից ենթադրաբար պատշաճ կերպով չանդրադառնալը

64. Դիմումատուն 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն բողոք է ներկայացրել նաեւ առ այն, որ Վերաքննիչ քրեական դատարանը չի անդրադարձել Վարչական շրջանի դատարանի կողմից իր կալանքի ժամկետը երկարացնելու համար վերաբերելի եւ բավարար պատճառներ չներկայացնելու առնչությամբ իր բողոքներում բերված փաստարկներին:

65. Կառավարությունը վիճարկել է դիմումատուի պնդումները:

66. Հաշվի առնելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ իր արած եզրահանգումները (տե՛ս վերելում՝ 53-րդ եւ 54-րդ պարբերությունները)՝ Դատարանը այս պնդումը հայտարարում է ընդունելի, սակայն համարում է, որ այս դեպքում անհրաժեշտ չէ քննել, թե արդյոք այդ նույն հիմքերով եւս Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-ին կետի խախտում տեղի է ունեցել, թե՛ ոչ:

4. Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետը

ա) Կողմերի փաստարկները

67. Դիմումատուն պնդել է, որ օրենքով կամ գործնականում ինքը զրկված է եղել իր անօրինական կալանավորման դիմաց Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված՝ հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունքից: ՔԴՕ-ի 66-րդ հոդվածի համաձայն՝ անօրինական կալանավորման դիմաց հատուցում կարող է պահանջել միայն արդարացված անձը եւ միայն նյութական վնասի մասով (տե՛ս վերելում՝ 33-րդ պարբերությունը): Ինչ վերաբերում է ՔՕ-ի 1064-րդ հոդվածին (տե՛ս վերելում՝ 36-րդ պարբերությունը), ապա սույն դրույթի ներքո հատուցման իրավունք կարող է ծագել միայն այն դեպքում, երբ կալանքի անօրինական լինելը հաստատվել է դատարանի կողմից: Այնուամենայնիվ, անհասկանալի է, թե ինչ ընթացակարգ է նկատի ունեցվել նշված հոդվածում օգտագործված՝ «օրենքով սահմանված կարգով» արտահայտությամբ, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված չէ որեւէ ընթացակարգ, որով կարելի է հատուցում պահանջել նշանակված անօրինական կալանքի համար: Ամեն դեպքում դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ համապատասխան որոշումները չեն համարվել անօրինական, ինչը նրան զրկել է հատուցում պահանջելու հնարավորությունից:

68. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներին: Ներպետական դատարանների կողմից սույն գործով չի հաստատվել այդ դրույթի կամ ներպետական իրավունքի որեւէ դրույթի խախտում, մինչդեռ փոխհատուցման իրավունքը կարող էր ծագել միայն կալանքի անօրինականությունը ճանաչելու դեպքում: Հետեւաբար 5-րդ հոդվածի 5-ին կետը կիրառելի չէ դիմումատուի գործով:

69. Կառավարությունը հավելել է, որ Դատարանի նախադեպային իրավունքին եւ որպես Եվրոպայի խորհրդի անդամ Հայաստանի ստանձնած պարտավորություններին համապատասխանելու նպատակով իշխանությունները մտցրել են օրենսդրական փոփոխություններ՝ ներդնելով ոչ նյութական վնասը՝ որպես Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները, այդ

թվում՝ ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքը խախտելու համար փոխհատուցման տեսակ:

բ) Դատարանի գնահատականը

70. Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները համարվում են պահպանված, եթե ապահովված է հնարավորությունը փոխհատուցում պահանջելու այնպիսի ազատագրված համար, որը տեղի է ունեցել 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ կետերի պայմանների խախտմամբ: 5-րդ կետով նախատեսված փոխհատուցման իրավունքը հետևաբար ենթադրում է, որ կա՛մ ներպետական մարմինների, կա՛մ Կոնվենցիայով սահմանված հաստատությունների կողմից հաստատվել է մյուս կետերից մեկի խախտում: Այս կապակցությամբ 5-րդ հոդվածի 5-րդ կետով երաշխավորված փոխհատուցման իրավունքից արդյունավետ օգտվելու իրավունքը պետք է ապահովվի վստահության բավարար աստիճանով (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ստանեն ընդդեմ Բուլղարիայի* [ՄՊ] [*Stanev v. Bulgaria*][GC], թիվ 36760/06, § 182 , ՄԻԵԴ 2012):

71. Անդրադառնալով սույն գործին՝ Դատարանը նկատում է, որ հաշվի առնելով 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ կետերի խախտումների վերաբերյալ իր եզրահանգումները (տե՛ս վերելում՝ 50-րդ, 54-րդ եւ 63-րդ պարբերությունները)՝ 5-րդ կետը կիրառելի է [դրանով]: Հետևաբար այն պետք է պարզի, թե մինչեւ սույն վճիռը դիմումատուն ներպետական մակարդակում ունեցել է արդյոք վնասի դիմաց հայցի ուժով օժտված փոխհատուցման իրավունք, կամ արդյոք սույն վճռի ընդունումից հետո նա ունենալու է այդպիսի իրավունք (տե՛ս վերելում հիշատակված *Ստանենի* գործը, § 183):

72. Դատարանը նշում է, որ ներպետական մարմիններից ոչ մեկը որեւէ փուլում ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի հայտնաբերել դիմումատուի՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների որեւէ խախտում: Հետևաբար նա զրկված է եղել ներպետական օրենսդրությամբ հաստուցում

պահանջելու հիմքերից: Ավելին, նույնիսկ եթե ենթադրենք, որ նա ունեցել է այդպիսի հիմքեր, Դատարանն արդեն գտել է, որ մինչև 2014 թվականի փոփոխությունները եւ սույն գործի ժամանակ (տե՛ս վերելում՝ 35-րդ եւ 36-րդ պարբերությունները) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ խախտվում էր Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները ոչ նյութական վնասի դիմաց փոխհատուցում պահանջելու անհնարինության տեսանկյունից (տե՛ս, որպես ամենավերջին վճիռ, *Նորիկ Պողոսյանն ընդդեմ Հայաստանի* [*Norik Poghosyan v. Armenia*], թիվ 63106/12, §§ 38 եւ 39, 2020 թվականի հոկտեմբերի 22):

73. Դատարանն այնուհետեւ նշում է, որ ինչպես նշել է Կառավարությունը (տե՛ս վերելում՝ 69-րդ պարբերությունը), սույն գործի իրադարձությունները տեղի ունենալուց հետո, մասնավորապես՝ 2014 թվականին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը փոփոխվել է՝ ներդնելով ոչ նյութական վնասը՝ որպես Կոնվենցիոն իրավունքները, այդ թվում՝ ազատության եւ անձնական անձեռնմխելիության իրավունքը խախտելու դիմաց պահանջվող հատուցման տեսակ (տե՛ս վերելում՝ 37-րդ պարբերությունը): Հետեւաբար անհրաժեշտ է որոշել, թե արդյոք սույն գործով վճիռը, որտեղ հայտնաբերվել են 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ կետերի խախտումներ (տե՛ս վերելում՝ 50-րդ, 54-րդ եւ 63-րդ պարբերությունները), հնարավորություն կտա դիմումատուին պահանջելու այդպիսի հատուցում: Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի պնդել, որ դիմումատուն օգտվում է այդպիսի իրավունքից, կամ մատնանշել ներպետական օրենսդրության՝ այդպիսի իրավունք նախատեսող որեւէ դրույթ: Բացի այդ, Դատարանն իր տրամադրության տակ չի ունեցել տեղեկություններ կամ նյութեր, որոնցից կարելի էր ենթադրել, որ ներպետական օրենսդրության մեջ առկա է իրավական պաշտպանության նման միջոց:

74. Հետեւաբար չի ապացուցվել այն, որ դիմումատուն հնարավորություն ուներ մինչև սույն գործով Դատարանի կողմից վճիռ կայացնելն օգտվել 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ եւ 4-րդ կետերի խախտման համար հատուցման իր իրավունքից կամ կկարողանա օգտվել դրանից վճիռն ընունվելուց հետո:

75. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի

խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

76. Դիմումատուն բողոքել է, որ 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը) եւ 2012 թվականի մարտի 27-ի որոշումների (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը) ձեւակերպումներով խախտվել է անմեղության կանխավարկածի իր իրավունքը:

Նա հղում է կատարել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետին, որն ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական իրավախախտում կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»:

Ա. Ընդունելիությունը

77. Դատարանը նշում է, որ սույն բողոքը ո՛չ ակնհայտորեն անհիմն է, ո՛չ էլ անընդունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածով նշված որեւէ այլ հիմքով: Հետեւաբար այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

78. Դիմումատուն նշել է, որ իր անմեղ համարվելու իրավունքը խախտվել է հետեւյալ երկու հիմքերով. առաջինը, երբ 2011 թվականի հոկտեմբերի 28-ին եւ

դեկտեմբերի 28-ին իր նախնական կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ որոշում կայացնելիս Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանն անդրադարձել է դիմումատուի կողմից «կատարված» արարքի բնույթին եւ վտանգավորության աստիճանին (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը)՝ դրանով ենթադրելով, որ իր կողմից հանցանքի կատարումը հաստատված փաստ է: Երկրորդ, դումումատուի գործով դատաքնության սկզբում Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարանի կողմից ընդունված՝ 2012 թվականի մարտի 27-ի որոշման մեջ պարունակվող հայտարարությունը, որով դատարանը գործը դատաքնության նշանակելու մասին որոշում է կայացրել «նրան քրեական պատասխանատվության ենթարկելու համար» այն հանցագործությունների համար, որոնց համար իրեն մեղադրանք է առաջադրվել (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը), նույնպես չի համապատասխանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Նման հայտարարությամբ արտացոլվել է դատավորի համոզմունքն այն մասին, որ դիմումատուն մեղավոր է եւ ենթադրվել է, որ հաջորդող դատաքնությունը պարզապես ձեւականություն է, որն անհրաժեշտ է դիմումատուին եւ գործով մյուս մեղադրյալներին քրեական պատասխանատվության ենթարկելու գործընթացն ավարտին հասցնելու համար: Վիճարկվող որոշումներով ոչ միայն նկարագրվել է կասկածյալի կարգավիճակ, այլ նաեւ ենթադրվել է, որ նա արդեն համարվում է մեղավոր՝ միանշանակ եւ անվերապահ կերպով: Ավելին, անմեղության կանխավարկածի՝ նրա իրավունքի խախտումն անուղղակիորեն ընդունվել է Վերաքննիչ դատարանի կողմից՝ վերջինիս 2012 թվականի հունվարի 19-ի որոշմամբ (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը): Դատարանի այն վճիռները, որոնց հղում է կատարել Կառավարությունը (տե՛ս ստորել՝ 79-րդ պարբերությունը), պարունակել են սույն գործի փաստերից տարբերվող փաստեր եւ հետեւաբար վերաբերելի չեն դիմումատուի գործին:

79. Կառավարությունը, հղում կատարելով *Շուվալովն ընդդեմ Էստոնիայի* [Shuvalov v. Estonia] (թիվ 39820/08 եւ 14942/09, § 80, 2012 թվականի մայիսի 29) եւ *Կոստասն ընդդեմ Հունաստանի* [Konstas v. Greece] (թիվ 53466/07, § 33,

2011 թվականի մայիսի 24) գործերով Դատարանի կայացրած վճիռներին, նշել է, որ ներպետական դատարանների վիճարկվող հայտարարությունները չպետք է ընթերցվեն համատեքստից դուրս: 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի որոշումների ձեւակերպումներով չեն խախտվել դիմումատուի՝ անմեղության կանխավարկածի իրավունքը, քանի որ դատարանն իր եզրակացությունների համար որպես հիմք ընդունել է ՔԴՕ-ի՝ մինչդատական կալանքի վերաբերյալ դրույթները, եւ դատարանի հիմնավորումներով ընդհանուր առմամբ չի ենթադրվել, որ դիմումատուն մեղավոր է: Ավելին, վիճահարույց ձեւակերպումների օրինականությանն անդրադարձ է կատարել Վերաքննիչ քրեական դատարանն իր 2011 թվականի նոյեմբերի 10-ի եւ 2012 թվականի հունվարի 19-ի որոշումներում (տե՛ս վերելում՝ 11-13-րդ պարբերությունները): Ինչ վերաբերում է մասնավորապես 2012 թվականի մարտի 27-ի որոշմանը, ապա «քրեական պատասխանատվության ենթարկելու համար» ձեւակերպումը չի կարող մեկնաբանվել որպես դիմումատուի մեղավորության ճանաչում:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

80. Դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորվում է «անմեղ համարվելու իրավունքը, քանի դեռ մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Անմեղության կանխավարկածը խախտվում է, եթե քրեական իրավախախտում կատարելու մեջ մեղադրվող անձի վերաբերյալ դատարանի որոշմամբ կամ պետական պաշտոնյայի հայտարարությամբ արտացոլվում է այն կարծիքը, որ նա մեղավոր է, նախքան նրա մեղավորությունը կապացուցվի օրենքին համապատասխան (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Ալենե դը Ռիբեմոնը ընդդեմ Ֆրանսիայի* [*Allet de Ribemont v. France*], 1995 թվականի փետրվարի 10, § 35, շարք Ա թիվ 308, *Մատիյաշեւիչն ընդդեմ Սերբիայի* [*Matijašević v. Serbia*], թիվ 23037/04, § 45, ՄԻԵԴ 2006-X, եւ *Ալենն ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ], [*Allen v. the United Kingdom*] [GC], թիվ 25424/09,

ՄԻԵԴ 2013): Նույնիսկ որեւէ պաշտոնական եզրահանգման բացակայության պայմաններում բավարար է այն, որ դատարանի կամ պաշտոնատար անձի կողմից հայտնվի կարծիք, որից կարելի է ենթադրել, որ մեղադրյալը դիտվում է որպես մեղավոր, ուստի դատական ատյանի կողմից այդպիսի կարծիքի վաղաժամ արտահայտումն ինքնին անխուսափելիորեն հակասում է քննարկվող կանխավարկածին (տե՛ս *Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի* [*Minelli v. Switzerland*], 1983 թվականի մարտի 25, § 37, շարք Ա թիվ 62, եւ վերելում հիշատակված՝ *Մատիյաշեւիչն ընդդեմ Սերբիայի* գործը, § 45): Այս կապակցությամբ Դատարանն ընդգծել է պետական պաշտոնյաների կողմից իրենց հայտարարություններում օգտագործվող բառերի ընտրության կարեւորությունը՝ նախքան դատաքննության արդյունքում իրավախախտման համար անձին մեղավոր ճանաչելը (տե՛ս *Դակտարասն ընդդեմ Լիտվայի* [*Daktaras v. Lithuania*], թիվ 42095/98, § 41, ՄԻԵԴ 2000-X, *Մարցիանոն ընդդեմ Իտալիայի* [*Marziano v. Italy*], թիվ 45313/99, § 28, 2002 թվականի նոյեմբերի 28, եւ Կարամանն ընդդեմ Գերմանիայի [*Karaman v. Germany*], թիվ 17103/10, § 63, 2014 թվականի փետրվարի 27):

81. Պետք է հիմնարար տարբերակում դնել այն հայտարարության, որով որեւէ մեկը պարզապես կասկածվում է հանցագործություն կատարելու մեջ, եւ վերջնական մեղադրական դատական ակտի բացակայության պայմաններում արված այն բացահայտ հայտարարության միջեւ, ըստ որի անձը կատարել է խնդրո առարկա հանցագործությունը (տե՛ս վերելում հիշատակված *Մատիյաշեւիչի* գործը, § 48): Երկրորդով խախտվում է անմեղության կանխավարկածը, մինչդեռ առաջին հայտարարությունը Դատարանի կողմից քննված տարբեր իրավիճակներում համարվել է անառարկելի (տե՛ս վերելում հիշատակված *Մարցիանոյի* գործը, § 31): Չնայած բառերի ընտրությունն այս առումով առանցքային նշանակություն ունի, Դատարանը մատնանշել է նաեւ, որ այն հարցը, թե արդյոք պաշտոնատար անձի հայտարարությունը խախտում է անմեղության կանխավարկածի սկզբունքը, թե՛ ոչ, պետք է որոշվի այն կոնկրետ հանգամանքների համատեքստում, որում արվել է վիճարկվող հայտարարությունը: Նույնիսկ որոշ ոչ պատշաճ ձեւակերպումների օգտագործումը

կարող է որոշիչ չլինել, երբ հաշվի են առնվում կոնկրետ վարույթի բնույթն ու համատեքստը (տե՛ս վերելում հիշատակված *Աշենի* գործը, §§ 125 եւ 126 եւ վերելում հիշատակված Կարամանի գործը, § 63):

բ) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործով

82. Դատարանն ի սկզբանե նշում է, որ դիմումատուի բողոքները վերաբերում են երկու տարբեր իրավիճակների. մինչդատական փուլում դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի որոշումներին (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը) եւ դիմումատուի գործի դատաքննության նախապատրաստական փուլում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարանի կայացրած՝ 2012 թվականի մարտի 27-ի որոշմանը (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը): Հետեւաբար Դատարանն այդ երկու իրավիճակները կքննարկի առանձին:

i) 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի
որոշումները

83. Ինչպես նշվել է վերելում, այս երկու որոշումները կայացվել են Վարչական շրջանների դատարանի կողմից՝ դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու հարցի հիմնավորվածությունը որոշելու արդյունքում: Դատարանը մի շարք գործերով գտել է 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում, երբ ներպետական դատարանները մինչդատական կալանքի վերաբերյալ որոշում կայացնելիս անվերապահորեն նշել են, որ դիմումատուն կատարել է հանցագործություն (տե՛ս, օրինակ, վերելում հիշատակված *Մատիյաշեւիչի* գործը, §§ 47-51, *Գարիցկին ընդդեմ Լեհաստանի* [*Garycki v. Poland*], թիվ 14348/02, §§ 71-73, 2007 թվականի փետրվարի 6, *Նեշտյակն ընդդեմ Սլովակիայի* [*Nešťák v. Slovakia*], թիվ 65559/01, §§ 89-91, 2007 թվականի փետրվարի 27, *Ֆեդորենկոն ընդդեմ Ռուսաստանի* [*Fedorenko v. Russia*] թիվ 39602/05, §§ 89-93, 2011 թվականի սեպտեմբերի 20, *Գուտսանովին ընդդեմ Բուլղարիայի* [*Gutsanovi v. Bulgaria*], թիվ 34529/10, §§ 202-204, ՄԻԵԴ 2013 (քաղվածքներ), *Մուգոշան ընդդեմ Չեռնոգորիայի* [*Mugoša v. Montenegro*] թիվ 76522/12, §§ 68 եւ 69, 2016 թվականի հունիսի 21, եւ *Գրուբնիկն ընդդեմ Ուկրաինայի* [*Grubnyk v. Ukraine*], թիվ 58444/15, §§ 138-147, 2020 թվականի սեպտեմբերի 17): Մյուս կողմից՝ մի շարք գործերով էլ Դատարանը գտել է, որ դիմումատուի կալանքի վերաբերյալ որոշում կայացնելիս ներպետական դատարանների կողմից կիրառված ձեւակերպումները չեն եղել անմեղության կանխավարկածի խախտմամբ դիմումատուների մեղավորության ճանաչում (տե՛ս, օրինակ, *Կարանն ընդդեմ Խորվաթիայի* (որոշում) [*Karan v. Croatia* (dec.)], թիվ 21139/05, 2006 թվականի դեկտեմբերի 7, *Պերիցա Օրեբն ընդդեմ Խորվաթիայի* [*Perica Oreb v. Croatia*], թիվ 20824/09, §§ 142-143, 2013 թվականի հոկտեմբերի 31, *Միլադինովը եւ այլք ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [*Miladinov and Others v. the former Yugoslav Republic of Macedonia*] թիվ 46398/09 եւ մյուս 2-ը, § 74-77, 2014 թվականի ապրիլի 24, եւ *Ռամկովսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության* [*Ramkovski v. the former Yugoslav Republic of Macedonia*],

թիվ 33566/11, §§ 83-85, 2018 թվականի փետրվարի 8):

84. Սույն գործով Վարչական շրջանների դատարանը պետք է որոշեր, թե արդյոք առկա են դիմումատուի նախնական կալանքի ժամկետը երկարացնելու փաստը հիմնավորող ողջամիտ կասկածներ եւ վերաբերելի հիմքեր: Այդ որոշումը կայացնելիս դատարանն անդրադարձել է դիմումատուի կողմից «կատարված» արարքի բնույթին եւ վտանգավորության աստիճանին (տե՛ս վերելում՝ 9-րդ պարբերությունը): Դատարանը, հաշվի առնելով վիճարկվող որոշումները եւ այն համատեքստը, որում դրանք ընդունվել են, ինչպես նաեւ վերոնշյալ նախադեպային իրավունքը, գտնում է, որ թեեւ Վարչական շրջանների դատարանի կողմից կիրառված ձեւակերպումը կարող է համարվել անպատշաճ, սակայն այն չի կարող համարվել նախքան դիմումատուի մեղավորությունն օրենքին համապատասխան ապացուցված լինելը նրա մեղավորության վերաբերյալ բացահայտ եւ անվերապահորեն արված հայտարարություն: Վարչական շրջանների դատարանը դիմումատուին չի դիտարկել որպես հանցագործությունը կատարած անձի (տե՛ս, որպես հակադրություն, վերելում հիշատակված *Մատիյաշեիչի* գործը, § 48, վերելում հիշատակված *Գարիցկիի* գործը, § 71, վերելում հիշատակված *Ֆեդորենկոյի* գործը, § 90), եւ [դիմումատուի] կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ բոլոր որոշումներում պարունակվող բաղկացուցիչ հայտարարություններում հստակ ասվում է, որ դիմումատուն «մեղադրվում է այդ հանցանքի համար» (տե՛ս, որպես համեմատություն, վերելում հիշատակված *Միլադինովը եւ այլք գործը*, § 75): Ավելին, Վարչական շրջանների դատարանի կողմից օգտագործված ձեւակերպումը քննադատվել է Վերաքննիչ դատարանի կողմից, որն իր որոշման մեջ, հղում անելով ՔԴՕ-ի 18-րդ հոդվածին, որով երաշխավորվում է անմեղության կանխավարկածի իրավունքը (տե՛ս վերելում՝ 34-րդ պարբերությունը), արտահայտել է այն կարծիքը, որ դիմումատուի մեղավորությունը չպետք է որոշվեր կալանավորման վերաբերյալ որոշման կայացման համատեքստում, եւ որ վիճարկվող ձեւակերպումը չպետք է հաշվի առնել (տե՛ս վերելում՝ 13-րդ պարբերությունը. տե՛ս համեմատության համար *Ս. Լ.-ն ընդդեմ Գերմանիայի* [*A.L. v. Germany*], թիվ 72758/01, § 38, 2005 թվականի

ապրիլի 28, § 38, եւ տե՛ս, *որպէս հակադրություն, Իսմոիլովը եւ այլք ընդդէմ Ռուսաստանի* [*Ismoilov and Others v. Russia*], թիվ 2947/06, § 169, 2008 թվականի ապրիլի 24):

85. Այս հանգամանքներում համոզվելով, որ Վարչական շրջանների դատարանն իր որոշումներում անդրադարձել է ոչ թե այն հարցին, թե արդյոք դիմումատուի մեղավորությունը հաստատվել է, թե՛ ոչ, այլ այն հարցին, թե արդյոք դիմումատուի նկատմամբ նշանակված կալանքի ժամկետը երկարացնելու համար առկա են օրինական հիմքեր, եւ հաշվի առնելով Վերաքննիչ դատարանի կողմից կատարված ուղղումը՝ Դատարանը եզրակացնում է, որ 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի որոշումների ձեւակերպումներով չի խախտվել անմեղության կանխավարկածի սկզբունքը:

86. Հետեւաբար 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի որոշումների առնչությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում տեղի չի ունեցել:

ii) 2012 թվականի մարտի 27-ի որոշումը

87. Դատարանը նշում է, որ ինչ վերաբերում է 2012 թվականի մարտի 27-ի որոշմանը, ապա այստեղ իրավիճակն այլ է: Այդ որոշումը կայացվել է դիմումատուի գործով դատաքննության սկզբում՝ Վարչական շրջանի դատարանի կողմից, որը կոչված էր ըստ էության որոշում կայացնելու դիմումատուին առաջադրված մեղադրանքի վերաբերյալ եւ պետք է առանձնահատուկ զգուշություն ցուցաբերեր բառերի ընտրության հարցում: Այնուամենայնիվ, Վարչական շրջանի դատարանը գործը դատաքննության նշանակելու մասին իր որոշման մեջ նշել է, որ դա անում է «[դիմումատուին] ... քրեական պատասխանատվության ենթարկելու համար» (տե՛ս վերելում՝ 22-րդ պարբերությունը): Դատարանը համարում է, որ այդպիսի բացահայտ եւ անվերապահ հայտարարությունը, ընդ որում, արված նույն դատավորի կողմից, որը, ի վերջո, դիմումատուի մեղավորության վերաբերյալ որոշում է կայացրել,

լիովին կարող էր հիմք տալ ընկալելու, որ Վարչական շրջանի դատարանը դիմումատուի մեղավորությունը համարել է որպես հաստատված փաստ, եւ որ դատաքննության նպատակը պարզապես գործի նախապես որոշված ելքը հաստատելն է եղել:

88. Դատարանը պատրաստ է դիտարկել այն հավանականությունը, որ Վարչական շրջանի դատարանն իր որոշումը ոչ պատշաճ շարադրելիս պարզապես տեխնիկական սխալ է թույլ տվել: Այնուամենայնիվ, Վարչական շրջանի դատարանը երբեւէ չի ընդունել, որ նման սխալ է թույլ տվել կամ դատաքննության որեւէ փուլում փորձ չի արել այն շտկել (տե՛ս, *mutatis mutandis*, վերելում հիշատակված *Գրուքնիկի* գործը, § 146): Այդպիսի շտկում չի կատարվել նաեւ Վերաքննիչ դատարանի կամ որեւէ այլ ներպետական մարմնի կողմից, եւ վիճարկվող որոշումը ենթակա չի եղել բողոքարկման:

89. Այն փաստը, որ ի վերջո դիմումատուն մեղավոր է ճանաչվել եւ դատապարտվել չորս տարի վեց ամիս ժամկետով ազատազրկման (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը), չի կարող բացառել նախքան իր մեղավորությունն օրենքին համապատասխան ապացուցված լինելը անմեղ համարվելու նրա սկզբնական իրավունքը: Ինչպես պարբերաբար նշվել է Դատարանի նախադեպային իրավունքում, 6-րդ հոդվածի 2-րդ կետով կարգավորվում է քրեական վարույթն իր ամբողջության մեջ՝ «անկախ քրեական վարույթի ելքից» (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերելում հիշատակված *Մինեյլի* գործը, §30, եւ վերելում հիշատակված *Մատիյաշեւիչի* գործը, § 49):

90. Հետեւաբար Դատարանը գտնում է, որ 2012 թվականի մարտի 27-ի որոշման ձեւակերմամբ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը:

91. Հետեւաբար 2012 թվականի մարտի 27-ի որոշման առնչությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

92. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է անհրաժեշտության դեպքում տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնասը

93. Դիմումատուն պահանջել է 26 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

94. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի պահանջած գումարի չափը չափազանցված է:

95. Հաշվի առնելով սույն գործով հայտնաբերված խախտումների բնույթը եւ իր պրակտիկան՝ Դատարանը դիմումատուին շնորհում է 5 200 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած ցանկացած գանձվող հարկ:

Բ. Ծախսերը եւ ծախքերը

96. Դիմումատուն նաեւ պահանջել է 1 181 500 ՀՀ դրամ՝ որպես հատուցում ներպետական դատարաններում կրած ծախսերի եւ ծախքերի համար, ու 1 803 020 ՀՀ դրամ՝ Դատարանում կրած ծախսերի եւ ծախքերի համար:

97. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի՝ Կոնվենցիայի 5-րդ եւ 6-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում տեղի չի ունեցել, եւ հետեւաբար նա ծախսերի եւ ծախքերի համար հատուցման իրավունք չունի:

98. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է,

որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Սույն գործով, հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած փաստաթղթերը եւ վերոնշյալ չափանիշները, Դատարանը ողջամիտ է համարում դիմումատուին շնորհել 3 000 եվրո՝ որպէս բոլոր պահանջների մասով կրած ծախսերի փոխհատուցում՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

99. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի:
2. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 2012 թվականի մարտի 27-ից մինչեւ 2013 թվականի օգոստոսի 20-ը դիմումատուին կալանքի տակ պահելու օրինականության առնչությամբ:
3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ դիմումատուի նկատմամբ մինչդատական փուլում որպէս խափանման միջոց ընտրված կալանքի ժամկետը երկարացնելու համար ներպետական դատարանների կողմից վերաբերելի եւ բավարար պատճառներ չներկայացնելու առնչությամբ:
4. Վճռում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ներկայացված՝ 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի, ինչպէս նաեւ 2012 թվականի փետրվարի 28-ի որոշումների օրինականության վերաբերյալ

բողոքը քննելու անհրաժեշտություն չկա:

5. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում այն հիմքով, որ 2012 թվականի մարտի 15-ի դատական նիստն անցկացվել է կողմերի իրավահավասարության սկզբունքի խախտմամբ:

6. Վճռում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ներկայացված՝ դիմումատուի ներկայացրած բողոքներում առկա փաստարկներին Վերաքննիչ քրեական դատարանի կողմից ենթադրաբար պատշաճ կերպով չանդրադառնալու վերաբերյալ բողոքը քննելու անհրաժեշտություն չկա:

7. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի խախտում:

8. Վճռում է, որ 2011 թվականի հոկտեմբերի 28-ի եւ դեկտեմբերի 28-ի որոշումների առնչությամբ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

9. Վճռում է, որ 2012 թվականի մարտի 27-ի որոշման առնչությամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

10. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին վճարի հետեւյալ գումարները, որոնք պետք է փոխարկվեն պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

i) ոչ նյութական վնասի դիմաց՝ 5 200 եվրո (հինգ հազար երկու հարյուր եվրո)՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

ii) ծախսերի եւ ծախքերի դիմաց՝ 3 000 եվրո (երեք հազար եվրո)՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը,

պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ:

11. *Մեթոմ* է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2021 թվականի հունիսի 15-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Անդրեա Տամիետտի

Յոնկո Գրոզեւ

Քարտուղար

Նախագահ